ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2022 թ.-ի **առաջին** նիստը տեղի է ունեցել 23.02.2022 թ.-ին: Խորհրդի 31 անդամից նիստին մասնակցել է 21-ը, ևս՝ 10 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանի բացման խոսք
2. «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» նախագծի ներկայացում (զեկուցողներ՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյան, Ժաննա Անդրեասյան, Կարեն Թռչունյան)
3. Հարց ու պատասխան
4. Ելույթներ /մինչև 3 րոպե/
5. Առաջիկա նիստերից մեկի օրակարգում նախարարին կից հասարակական խորհրդի անդամների ներկայացրած հարցերի քննարկում և հաստատում

Նիստի ընթացքում ընդունվել է որոշում.

1. Ընդունել ի գիտություն զեկույցը:
2. Հավանության արժանացնել ‹‹Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի›› նախագիծը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2022 թ.-ի **երկրորդ** նիստը տեղի է ունեցել 09.06.2022 թ.-ին: Խորհրդի 30 անդամից նիստին մասնակցել է 14-ը, ևս՝ 11 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման նոր համակարգի գործարկման ընթացքում առաջացած խնդիրներ, նախորդ տարվա արդյունքներ և իրականացված փոփոխություններ (զեկուցողներ՝ «Համագործակցային կրթական ծրագրեր»՝ Լուսինե Թոփչյան, «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն»՝ Լուսինե Գրիգորյան)
2. Դպրոցական գրադարանների կարևորության, նորացման, ուսումնաօժանդակ և գեղարվեստական գրքերով համալրման անհրաժեշտություն, գրադարանավարների վերապատրաստում («Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն»՝ Արմեն Մարտիրոսյան)
3. Օրակարգի հարցերի շուրջ պարզաբանումներ (ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյան)
4. Հարց ու պատասխան
5. Ելույթներ (մինչև 3 րոպե)

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2022 թ.-ի **երրորդ** նիստը տեղի է ունեցել 29.09.2022 թ.-ին: Խորհրդի 29 անդամից նիստին մասնակցել է 15-ը, ևս՝ 9 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում /զեկուցող՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թոչունյան/
2. Հարց ու պատասխան
3. Ելույթներ (մինչև 3 րոպե)

Նիստի ընթացքում ընդունվել է որոշում.

1. Ընդունել ի գիտություն զեկույցը:
2. Հավանության արժանացնել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2022 թ.-ի **չորրորդ** նիստը տեղի է ունեցել 25.11.2022 թ.-ին: Խորհրդի 31 անդամից նիստին մասնակցել է 13-ը, ևս՝ 6 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանի ողջույնի խոսք
2. «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքի, ինչպես նաև հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի ներկայացում /զեկուցող՝ GIZ-ի փորձագետ Մարինե Հակոբյան/
3. Հարց ու պատասխան
4. Ելույթներ /մինչև 3 րոպե/

Նիստի ընթացքում ընդունվել է որոշում.

1. Ընդունել ի գիտություն զեկույցը:
2. Հավանության արժանացնել «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքի, ինչպես նաև հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերը: